

# Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ХРИСТИАНСКІЙ ВОСТОКЪ, т. I—IV.

Կայսերական Գիտութեանց Ճեմարանի հրատարակութեամբ և ակադեմիկոս պ. Ն. Մառի խմբագրութեամբ Գեորգրադում 1912 թուից սկսած լոյս է տեսնում սուսերէն լեզուով գիտական հանդէս «Գրիստոնէական Արեւիք» վերնագրով, որ նուիրուած է յատկապէս՝ Ասիայի և Ափրիկէի ժողովրդների բրիստոնէական կուլտուրայի ուսումնասիրութեանը: Հանդէսը լոյս է տեսնում տարէնը 3 անգամ տառնձին պրակներով, որ կազմում են մի հատոր: Այդպիսով մինչև այժմ լոյս են տեսել 1912, 1913, 1914 և 1915 թուի հատորները, բազկացած իւրաքանչիւրը 3 պրակից: Իսկ ինչ վերաբերում է 1916 թուին լոյս տեսնելիք պրակներին, դո՞քա դեռ մամուլի տակ են:

Հայագէտները, ի հարկէ, չեն կարող անուշադիր թողնել այդ հանդէսը, որովհետև այն պարունակում է հարուստ նիւթ, ի միջի այլոց, և հայագիտութեան վերաբերմամբ: Ի դէպ, այդ հանդիսում հայագէտներից մասնակցում են պ. պ. Ն. Մառ, Ն. Աղոնց, Յ. Օրբելի, Գարեգին վրդ. Յովսէփեան, Գալուստ Տէր-Մկրտչեան և ուրիշները:

Մինչ օրս լոյս տեսած հատորների մէջ ուշադրութիւն են գրաւում հետևեալ յօդուածները.

I Հատորում Գ. Տէր-Մկրտչեանի—«Վիրշայ և Ուշապը XIV դարու յիշատակագրի մէջ», Գարեգին վարդապետի—«Ճանապարհորդութիւն դէպի Նրուսդէմ 1911 թուի ամբանը», Ն. Մառի—«Ազգայի հեաքերը Հայոց մէջ», Ի. Մըշովի—«1892 թուի պեղումներին երևան հանած Անիի եկեղեցին», Վ. Բոլոտովի—«Հայկական եկեղեցական տոմարի մասին»:

II Հատորում Յ. Օրբելու—«Բազաւանի 639 թուի արձա-

նագրութիւնը և հայոց շինարարական այլ արձանագրութիւնները, Ն. Մառի—«Երեսողութիւններ Ս. Գրգի հայ և վրաց բնագրերի մասին», Ն. Աղոնցի—«Ամաղեղիս, եպիսկոպոս Քերանի», Գարեգին վարդապետի—«Տարասյիճ Օրբելիանի և Մինա-Յաթունի սերունդը», Ն. Մառի—«Երեսողութիւններ հային (շարունակութիւն)», Ն. Մառի—«Հին Ուխտի վրացական վերսիայի էջմիածնի պատաստիկը»:

III Հատորում Տիրայր վարդապետի—«Մովսէս եպիսկոպոսի ողբը Անի քաղաքի մասին», Կարապետ եպիսկոպոսի—«Յովհաննէս արքեպիսկոպոսի ևանապարհորդութիւնը դէպի Հապէշտաուն», Լ. Մելիքսեթ-բէկի—«Ծոթնկնքեան դիրքը ու նրա մեկնութիւնը, ըստ վրաց և հայ խմբագրութեանց», Լ. Մելիքսեթ-բէկի—«Պահպան հրեշտակներ» (հայոց պարականոն գրականութիւնից), Ն. Մառի—«Տեղորի տանարի շինարարական արձանագրութեան սր ժամանակին պատկանելու հարցի մասին», Յ. Օրբելու—«Յ հայկական արձանագրութիւններ՝ VII—X դարու», Յ. Օրբելու—«VII դարու 13 արձանագրութեանց մէջ գործածուող բառերի և անուանց ցանկ», Մ. Բոստովցի—«էջմիածնի մօտ նորերս զբնուած յունարէն արձանագրութիւնը», Ն. Մառի—«Երեսողութիւններ հային» (շարունակ.), Յ. Օրբելու—«Երջխան Կամաարականների երկու շինարարական արձանագրութիւն»:

IV Հատորում Լ. Մելիքսեթ-բէկի—«Ազաթանդեղոսի վրացական վերսիան և նրա նշանակութիւնը վրաց պատմագրութեան համար», Ն. Մառի—«Մահադոյժ Կարապետ եպիսկոպոսի», Ն. Մառի—«Երեսողութիւններ հային» (շարունակ.), Լ. Մելիքսեթ-բէկի—«Ինչպէս էր արդեօք կառուցուած բեժը հին Վրաստանում»:

Բացի յիշեալ յօդուածներից, նոյն հատորների մէջ գտնուում են և զանազան մանր գրութիւններ «Այլ և այլ լուրերի» բաժնում, նոյնպէս և մասնախօսականներ հային: Հարկաւոր դէպքում հրատարակութեան մէջ տեղ են գտել նաև բազմաթիւ նըկարներ:

„Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племень Кавказа,“ вып. 44 (1915 г.)

«Сборникъ»-ի այս դիրքը պարունակում է 16 յօդուած զանազան բովանդակութեամբ՝ տեղագրական, ազգագրական, հնագիտական և լեզուաբանական: Այս յօդուածների շարքում հայագիտական բնուէրութիւն ունի միմիայն մէկը, այն է՝ Ե. Լալա-

յեանի «Ванский вилаетъ (Васпураканъ)» վերնագիրը կրող աշխատութիւնը, որ առաջին անգամ տպագրուեց հայերէն՝ «Ազգագրական Հանդիսի» XX դրքում: Միւս յօդուածները վերաբերում են կովկասի այլ և այլ ժողովրդներին: Մասամբ հետաքրքիր է Ա. Դիրրի «Божества охоты и скотничіей ямыкъ у кавказцев» յօդուածը, որ միաժամանակ տպագրուեց նաև «Азия» րնագէտների և բժիշկների XIII համագումարի աշխատութիւնների» նորերս լոյս տեսած VI հատորի մէջ: Բայց, դժբաղդարար, իր՝ 16 երեսանոց յօդուածի մէջ պ. Դիրր մի բառ անգամ չի բարեհաւուս նուիրել հայերին, կարծէս թէ հայերը կովկասցիների շարքին չեն պատկանում, մինչդեռ իր ամբողջ յօդուածի մէջ նա ի նկատի ունի արխազներին, սուաններին, օսերին, չերքեսներին, մինգրելներին և ուրիշներին: Երկուսից մէկը՝ կամ յօդուածի վերնագիրն է սխալ դրած, կամ յօդուածագիրը տպատութեամբ լուսւմ է հայերի (նոյնպէս և զրացիների) մասին:

#### ՎՐԱՅ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ազգագրական Հանդիսի» նախորդ դրքում մենք տուինք մի համառոտ տեսութիւն զրաց Պատմա-Ազգագրական Ընկերութեան հրատարակութիւնների զրայ, այսինքն «Վաղմի Վրաստան»-ի I—III և «Վրաստանի Հնութիւններ»-ի II—III հատորների մասին: Այն օրուանից նոյն ընկերութիւնը, չնայած ներկայ ձախորդ պայմաններին, հնարաւորութիւն ունեցաւ հրատարակելու դարձեալ 2 ստուար պիքք, որոնցից մէկը «Վաղմի Վրաստան»-ի IV հատորն է կազմում, իսկ միւսը՝ «Վրաց հին գրականութիւն» շարքի անդրանիկ հատորը:

«Վաղմի Վրաստան»-ի IV հատորը, որ բաղկացած է XII+310 երեսից, նուիրուած է ընկերութեան հիմնադիր, խորհրդի անդամ և առաջին գանձապահ և զրացարանապետ-թանգարանապետ Ալէքսանդր Սաբաշիշվիլու յիշատակին: Այդ հատորի մէջ սկզբում զետեղուած է հանգուցեայի կենսագրութիւնը և լուսանկարով, ապա զայիս են հանգուցեայի անտիպ աշխատութիւնները, որոնք են՝ 1) Վեփիխա տղասանիի Արամուշի վարիանսը, 2) Մի գիւղացու ընտանիքի դրութիւնը XVIII դարում, և 3) Վեփիխա տղասանիի անվաւեր տեղեր: Բացի հանգուցեայի գրուածքներից, նոյն հատորում գտնուում ենք և հետևեալ յօդուածները՝ Ս. Գորգաձէի «Վրացական պրօզա» և Ե. Թաղայշվիլու

«Քութայիսի եկեղեցուն համնելիք տուրքերի դաւթար, կազմուած 1678 թուին»: Ապա գալիս է ազգազրական բաժինը, ուր զեւանդուած են վոսցերէն հէքիաթներ՝ թուով 18: Համեմատելով նախորդ հատորներին հետ, այս հատորը, անկասկած, թոյլ տպաւորութիւն է թողնում, թէ նիւթերի ընտրութեան և թէ ընդհանուր բովանդակութեան տեսակէտից:

«Վրաց հին գրականութիւն» շարքի անգրանիկ հատորը, որ բազկացած է XLJ—888 երեսից, ամբողջովին նուիրուած է պ. Յ. Աբուլաձէի աշխատութեան, որ կրում է հետևեալ վերնագիրը՝ «Շահ-Նամէի կամ Քաղաւորաց զրքի վրաց վերստաները»: Գիրքը սկսում է աշխատասիրողի ներածութեամբ և յառաջաբանով, որը, իսկապէս ասած, մի ամբողջ ուսումնասիրութիւն է ներկայացնում: Ապա գալիս է «Շահ-Նամէի» վրաց բնագիրը տարբեր ընթացումներով (ըստ վրաց ձեռագրերի), բազկացած 3 մասից՝ 1) Ջաքիանի (եր. 1—36), 2) Սաամիանի (եր. 37—297), և 3) Բասամիանի (եր. 299—790): Այս հրատարակութեան գլխաւոր արժէքը կազմում է զրքի վերջում զետեղած բառարանը, որ «Շահ-Նամէի» մէջ զործածուող օտար և դժուարին վրաց բառերը համեմատում են այլ լեզուների մէջ զործածուող բառերի հետ: Առանձնապէս հետաքրքիր են վրաց բառերի համեմատութիւնները հայերէն բառերի հետ, որ պատիւ է բերում պ. Աբուլաձէին, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ վերջինս այն սակաւթիւ վրաց գրականագէտներիցն է, որոնք ուսումնասիրել են հայերէնը: Դժբաղդաբար, պ. Աբուլաձէի համեմատութիւնները տեղ տեղ անյաջող են:

Լ. Մ.—Բ.

